



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՌԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

☒ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-28-77

թիվ _____

« _____ » _____ 2013 թ.

«1-ին լրատվական»-ի թղթակից

Ադրինե Թորոսյանին

/ք.Վանաձոր, Երևանյան խճ. 145/1, քն.35/

Ձեր 12.07.2013թ. դիմումին՝

Հարգելի Թորոսյան

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի առողջապահության համակարգերի օպտիմալացման ծրագրերը հաստատելու մասին» թիվ 1911-Ն որոշման (Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թ. ապրիլի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թ. նոյեմբերի 2-ի թիվ 1911-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 699-Ն որոշման խմբագրությամբ՝ կետ 3.1.), իրականացվել է «Վանաձորի թիվ 2 հիվանդանոց» ՊՓԲԸ-ի կազմից հակատուբերկուլյոզային բաժանմունքի առանձնացման և այդ նույն բաժանմունքը՝ 15 մահճակալով «Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ-ին միացնելու, իսկ 2-րդ փուլով «Վանաձորի թիվ 2 հիվանդանոց» ՊՓԲԸ-ի և Լ.Արեշյանի անվան «Վանաձորի թիվ 1 հիվանդանոցային համալիր» ՓԲԸ-ի միաձուլում՝ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ ստեղծելու նպատակով:

ՀՀ Լոռու մարզպետի 2011 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 417-Ա որոշմամբ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ- տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվել Մհեր Մկրտչի Մարգարյանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Լոռու մարզի առողջապահական համակարգի օպտիմալացման գործընթացը վերջնական չէ, նպատակահարմար է համարվել Մ. Մարգարյանին ժամանակավորապես թողնել «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ- տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնում: Միաժամանակ հայտնում են Ձեզ, որ օրենսդրությամբ և իրավական ակտերով տնօրենի մրցույթ հայտարարելու համար ժամկետ սահմանված չէ:

ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ